

Հաշվետվություն

2018 թվականի ընթացքում մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի կատարած աշխատանքների մասին

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը 2018 թվականի հունվարի 8-ից մինչև դեկտեմբերի 24-ը կատարել է հետևյալ աշխատանքները.

- ✓ 2018 թվականին կադրերի և հատուկ բաժինը վերակազմակերպվել է մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի,
- ✓ Մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը համալրվել է շրջանավարտների հետ աշխատանքների համակարգողի պաշտոնով,
- ✓ Հրամանների նախագծերի պատրաստում թվով **1182**, որից **15**-ը՝ ծննդյան շնորհավորանքի և պարգևատրման, **36**-ը՝ խրախուսման, **24**-ը՝ դրամական օգնության և աջակցության, **2**-ը՝ նկատողության,
- ✓ Աշխատանքային պայմանագրերի պատրաստում թվով **245**, համաձայնագրեր՝ **318**,
- ✓ Նախապատրաստվել են պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական և քոլեջի անձնակազմի հաստիքացուցակներ և հաստիքային միավորներ (08.05.2018թ., 17.05.2018թ.),
- ✓ Գիտական խորհրդում ընդունվել և հրամանով հաստատվել է **5** կանոնադրություն, **7** կարգ և **8** կանոնակարգ,
- ✓ Պատրաստվել է թվով **541** ծանուցում (աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, աշխատողների քանակի, հաստիքների կրճատման, կենսաթոշակային տարիքի և այլն.),
- ✓ 2018 թվականին թափուր պաշտոնների համալրման նպատակով հայտարարվել են բաց մրցույթներ **3** ամբիոնների վարիչների, **2** ֆակուլտետների դեկանների, ինչպես նաև կաթսայատան **8** օպերատորների համար: Մրցույթի արդյունքում համալրվել են թափուր պաշտոնները, կնքվել են աշխատանքային պայմանագրեր և տրվել՝ աշխատանքի ընդունման հրամաններ,
- ✓ Կատարած աշխատանքների դրական գնահատման հիման վրա երկարաձգվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմից **65** աշխատողների, վարչական, ուսումնաօժանդակ և վարչատնտեսական անձնակազմից՝ **28** աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերը,
- ✓ Լրամշակվել և ռեկտորի հրամանով հաստատվել են Համալսարանի հաստիքացուցակում ներառված պաշտոնների անձնագրերը՝ թվով **147** հատ,
- ✓ Սոցիալական ապահովության տարածքային բաժնից ետ են վերցվել համալսարանի հիմնական կազմի աշխատանքային գործույկները, և դրանք աշխատողներին վերադարձման գործընթացում է,

- ✓ Հաստատվել է համալսարանի պարտադիր բժշկական զննության ենթակա աշխատակիցների ցանկը, և թվով 365 աշխատակից ուղարկվել է պարտադիր բուժզննության,
- ✓ Պետական վիճակագրական ծառայություն են ներկայացվել վիճակագրական ամենամյա և եռամսյակային հաշվետվությունները՝ համաձայն 3գմ և 1-ԹԱՇ ձևերի,
- ✓ Նախապատրաստվել և Հայաստանի Հանրապետության Կրթության և Գիտության նախարարություն և այլ պետական կառույցներ են ներկայացվել պահանջվող համապատասխան գրությունների պատասխանները,
- ✓ Զինվորական կոմիսարիատներ են ներկայացվել համապատասխան գրություններ.
 - Թվով 30 զինապարտ աշխատակիցների անհրաժեշտ տվյալներով ցուցակներ,
 - Թվով 70 զինակոչիկ ուսանողներին վերաբերյալ Ձև 26 տեղեկանքներ,
 - Թվով 30 զինապարտ և զինակոչիկ ուսանողների համար անհրաժեշտ տեղեկանքներ,
 - Առկա ուսուցման համակարգի զինակոչիկ և զինապարտ ուսանողների ցուցակները ուղարկվել է համապատասխան զինկոմիսարիատներ,
 - Լրացվել է զինապարտ աշխատակիցների և ուսանողների հաշվառման գրանցամատյան և երեք ամիսը մեկ ներկայացվել է զինկոմիսարիատ,
- ✓ Վերանայվել և թարմացվել է 01.12.2018թ.ից սկսած թվով 11 անձնական գործ,
- ✓ Համալսարան – շրջանավարտ – գործատու եռակողմ համագործակցության շրջանակում 2018-ին մասնակցել ենք LOGOSEXPO Կրթություն ու Կարիերա միջազգային ցուցահանդեսին, նաև՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Լոռու մարզի զբաղվածության կենտրոնի կողմից կազմակերպված աշխատանքի տոնավաճառին,
- ✓ Իրականացվել են համալսարանի շրջանավարտների բազայի համալրման աշխատանքներ,
- ✓ Մասնակցել ենք ՈԱԱԿ-ի միջազգային երկու ֆորումների,
- ✓ Իրականացվել են հանդիպումներ ՎՊՀ ավարտական կուրսերի ուսանողների հետ,
- ✓ Բուհ-դպրոց կապի շրջանակներում այցելել ենք Վանաձորի դպրոցներ՝ մասնագիտական կողմնորոշման և իրազեկման աշխատանքներով,
- ✓ Իրականացվել են սեմինարներ ռեզյումեների կազմման վերաբերյալ,
- ✓ Կազմակերպվել և իրականացվել են մի շարք հանդիպումներ համալսարանի գործընկերների հետ TEACH for ARMENIA, VTB ARMENIA, VIVA-CELL, British Councils, VTC և այլն,
- ✓ Աշխատանքի շուկայում թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը մշտապես հասանելի է եղել ՎՊՀ ուսանողներին ու շրջանավարտներին շրջանավարտների կայքի միջոցով:

Մարդկային ռեսուրսների կառավարման

բաժնի վարիչ՝

Վ. Մինասյան

25.12.2018թ.

